ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(XIX դ. 90-ական թվականներ)

ՊՈՂՈՍ ՍԻՄՈՆՅԱՆ

XIX դ. 90-ական թվականներին սուլթանական կառավարությունն ավելի ուժեղացրեց արևմտահայության ազգային, սոցիալական ու կրոնական հալածանքները՝ նպատակ ունենալով մասսայական կոտորածներով մեկընդմիշտ «լուծել» Հայկական հարցը։ Արգելվեց «հայ» և «Հայաստան» անունների գործածությունը, սանձարձակ գործողություններ ձեռնարկվեցին հայկական եկեղեցու դեմ, ուսումնական հաստատություններից հանվեց հայոց պատմության դասավանդումը։ Հայկական գավառներում ամենուր քրիստոնյա պաշտոնյաներին փոխարինում էին մահմեդականներով[1]։

Աբդուլ Համիդ II-ի համար արևմտահայության դեմ վճռական գործողությունների ծավալման ուղեցույց դարձավ մեծ վեզիր Մահմեդ Քեամիլ փաշայի կտակ-նամակը, ուր հեղինակը Թուրքիայի ամրապնդման միջոց էր համարում թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության ֆիզիկական բնաջնջումը։ «Եթե Եվրոպիո մասին մեջ մեր ծոցը օձ մը սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունը ընենք Տաճկաստանի մեջ։ Խելոքությունը՝ ջնջել, վերացնելն է այս ամեն տարրերը,— գրում էր նա,— որ օր մը կրնան մեզի նույն վտանգը ծնանիլ։ Մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչցեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք... Այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կըպահանջե, որ կասկածելի տարրը անհետ և անճետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզի. ամեն գործիք պատրաստ ունինք. քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ։ Կրոնական պատերազմ մը կհրատարակենք, և դյուրին պատերազմ, այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն, և ոչ ալ պաշտպան»[2]։ Աբդուլ Համիդ II-ը այդ հրեշավոր ծրագրի իրագործման ընթացքում որպես զենք օգտագործեց նաև քրդական առանձին ցեղերի։ Ըստ այդմ՝ Բ. Դուռն կողմից քրդական անհնազանդ ցեղերին զենքի ուժով հպատակեցնելու ավանդական քաղաքականությունը կտրուկ փոփոխության ենթարկվեց և ստացավ սիրաշահելու ու խաղաղ միջոցներով պետության կողմը գրավելու կերպարանք։ «Հայկական խնդիրը դուրս գալուց հետո,— ասում էր քուրդ Հուսեին աղան,— Թուրքերը մեծ բարեկամություն սկսեցին ցույց տալ մեզ և մեր ձեռքով կամենում են կրակ բռնել, այդ աշխարհը սրբել հայերից։ Դրա համար շատ մեծ աշխատություններ են եղել և լինում են»[3]։ Բ. Դուռը սկսեց դեպի իրեն գրավել քրդական վերնախավին և քրդական առանձին ցեղերի կրոնական մոլեռանդությունը բորբոքել քրիստոնյա հպատակների, հատկապես հայերի հանդեպ[4], որոնք զինված ջարդարարների առջև մնում էին անպաշտպան[5]։ Միա-

---

[1] Архив внешней политики России (այնուհետև՝ АВПР), ф. «Политархив», д. 1625, л. 2—3.

[2] *«Փորձ», 1879, № 7—8, էջ 204—205։*

[3] *Ա. Թ ո խ մ ա խ յ ա ն, Մասիս լեռների հարավային ստորոտները, մաս Բ, Թիֆլիս, 1883, էջ 51։*

[4] Э. Ф. Найт, Революционный переворот в Турции, СПб., 1914, с. 37.

[5] «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896. с. 38

ժամանակ թուրքական իշխանությունները կանխամտածված կերպով տարածում էին ստահոդ լուրեր, թե իբր հայերը եվրոպական քրիստոնյա պետությունների միջոցով ձգտում են ձեռք բերել քաղաքական իշխանություն և իշխել քրդերի վրա[6], որ նրանք քրդերի երդվյալ թշնամիներն են։

Բ. Դուռը, արհեստականորեն բորբոքելով հայ-քրդական հակամարտություններ, աշխատում էր լուծում տալ իր համար շատ կարևոր խնդիրների։ Ամենից առաջ ինչ-որ չափով չեղոքացվում էին կառավարության նկատմամբ քրդական անհնազանդ առանձին ցեղերի գործողությունները, և քրդական վերնախավին ու նրան կուրորեն հետևող հետամնաց տարրերին կառավարությունն օգտագործում էր որպես զենք՝ արևմտահայության դեմ։ Մյուս կողմից բանն այնպես էր ներկայացվում, որ դա ոչ թե թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության դրսևորում էր, այլ հայ-քրդական հակամարտությունների հետևանք։ Թուրքական կառավարության քաղաքականության այդ մութ ծալքերը նկատի ունենալով՝ Մ. Մակկոլը գրում էր. «Քրիստոնյաների չարդը Օսմանյան կայսրությունում կատարվում էր պարբերաբար, ոչ որպես տեղական ֆանատիզմի պայթյունի հետևանք, այլ քաղաքական ակտ, կապված որոշ սիստեմի հետ և կատարվում է մշտապես սուլթանի ու նրա խորհրդականների հրամանով ու ներշնչմամբ»[7]։

Բ. Դուռը, ձգտելով ավելի խորացնել արևմտահայության տնտեսական քայքայումն ու հարստահարությունները, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանում և կայսրության մյուս հայաշատ վայրերում մահմեդական վաչկատուն ցեղերի վերաբնակեցման գործին[8]։ Բարեկեցիկ կյանքի մեծ խոստումներ տալով, սակայն, իրականում, գաղթականների կյանքի ու ապրուստի մասին ամենևին հոգ չըտանելով, կառավարությունը նրանց ղինում էր և ուղղում հայերի դեմ։ Մահմեդական վերաբնակները հոծ խմբերով, թուրքական պաշտոնյաների ուղեկցությամբ, շարժվում էին Արևմտյան Հայաստանի խորքերը։ «Կարգի պաշտպան» ուղեկցորդ պաշտոնյաներն իրենց աչքերը փակում էին մահմեդական վերաբնակների կողմից հայերի կողոպուտի առջև, օգնում և օրինականացնում նրանց գործողությունները։ Չարդերը դարձել էին առօրյա գործ։ Սովետական պատմաբան Գ. Բոնդարևսկին մահմեդական վերաբնակիչների կողմից թըշվառ վիճակի հասցված արևմտահայության անելանելի կացության մասին գրում է. «Սուլթանի կառավարության ցուցումով հայերը ենթարկվում էին վերաբնակիչների ամենադաժան բռնություններին, կոպիտ ու լկտի հետապնդումներին»[9]։ Վերաբնակները հիմնավորվում էին հայկական գյուղերում[10], դավթում հայերի հողերը, մինչդեռ հողազուրկ հայ ազգաբնակչությունը պետք է հողային հարկ վճարեր տերությանը[11]։ Ռ. Ժեկմենը զայրույթով նշավակում էր թուրքական կառավարությանը, որը Արևմտյան Հայաստանի գավառները լցրել էր «վայրի հորդաներով և ինքը նրանց առջև դրել էր երկընտրանք՝ ապրել թալանով ու կողոպուտով, կամ ոչնչանալ աղքատությունից»[12]։ Այդ բարբարոսների համար հայերն անխնա հոշոտման առարկա էին, քանի որ «հայը որպես քրիստոնյա զենք կրելու իրավունք չուներ»[13]։ «Հայերին կարող էին ճնշել ու կողոպտել բոլոր նրանք,— գրել է Ի. Գոլոբորոդկոն,— ովքեր դրա համար բա-

---

6 Լևոն, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 117։

7 «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, с. 173.

8 «Правительственный вестник», 1860, № 199.

9 Г. Л. Бондаревский, Багдадская железная дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888—1903 гг.), Ташкент, 1955, с. 60.

10 «Новое время», 31. V. 1913.

11 «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», с. 62—63.

12 Նույն տեղում, էջ 57—68։

13 «Մշակ», 1879, № 74։

վականին ուժ ունեին»[14]։ Իսկ սուլթանական կառավարությունը «մասնակից էր չարագործների արարքներուն»[15], «աստիճանաբար ոչնչացնում էր անդին հայերին»[16]։ Այսպիսով, «այն ավազակությունները, որ առաջ անհատական բնույթ ունեին,— դրել է Հ. Աճառյանը,— այնուհետև կազմակերպված պատուհասներ դարձան հայ ժողովրդի գլխին»[17]։

1880, 1886[18], 1895[19] թթ. Թուրքական կառավարությունը կատարեց հայերով խիտ բնակեցված նահանգների կամայական վերաբաժանում, նպատակ ունենալով հայերով խիտ բնակեցված մարդերը մասնատել, միավորել մահմեդականներով բնակեցված վայրերի հետ և այդպիսով ապահովել մահմեդական ազգաբնակչության թվական գերակշռությունը հայերի նկատմամբ, բացառել բարենորոգումների խնդիրը։

1891 թ. Աբդուլ Համիդ II-ը ռուս-թուրքական սահմանի երկարությամբ կազմակերպեց քրդական «Համիդիե» անկանոն գնդեր, որոնք ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ծառայելու էին որպես ռուսների դեմ զորական ուժ, իսկ խաղաղ պայմաններում՝ իբրև հայ ազգաբնակչության ֆիզիկական բնաջնջման գործիք[20]։ «Համիդիե» գնդերն 1894 թ. հուլիս-օգոստոսին օգտագործվեցին Սասունում, երբ կոտրվեց ինքնապաշտպանության ելած սասունցիների դիմադրությունը և թուրքական կանոնավոր բանակի զինվորների ակտիվ մասնակցությամբ իրագործվեց կենտրոնական կառավարության կողմից Սասունի հայության պլանավորված հրեշավոր կոտորածը։ Սասունի հայ ազգաբնակչության դաժան հաշվեհարդարին հաջորդեցին զանգվածային կոտորածներն ամբողջ Արևմտյան Հայաստանում[21]։ Թուրքական իշխանությունները և մահմեդական հոգևորականները մի կողմից զինում էին մոլեռանդ ամբոխին ու հայերին կոտորելու ցուցում տալիս[22], իսկ մյուս կողմից ջանում էին հանգստացնել հայերին, թե իբր «կոտորածի մասին լուրերը կեղծ են»[23]։ Հակառակ նման հավաստիացումների, 1895 թ. սեպտեմբերին ողջ Արևմտյան Հայաստանը, ինչպես նաև բուն Թուրքիայի հայաբնակ մյուս վիլայեթները վերածվեցին սպանդանոցի[24]։

Կոտորածը սկսվեց 1895 թ. սեպտեմբերի 26-ին, Տրապիզոնում Թուրքական պաշտոնյայի վրա երկու ծպտյալ անձանց պրովոկացիոն հարձակումից հետո[25]։ Սեպտեմբերի 27-ին և 30-ին կոտորածներ տեղի ունեցան Նիկոմեդիայում և Բաբերդում[26]։ Հոկտեմբերի 14-ին սկսվեց Շապին-Գարահիսարի ու նրա շրջակա գյուղերի, իսկ հոկտեմբերի երկրորդ կեսին՝ Մարաշի, Խարբերդի, Կարինի հայերի կոտորածը[27]։ Ջարդարարական գործողություններն ավելի մեծ չափեր ընդունեցին ու նոր ուժով կրկնվեցին Տարոնում[28] և Սեբաստիայում[29]։

---

14 И. И. Голобородко, Старая и новая Турция, СПб., 1908, с. 222.

15 Ա. Կիտուր, Հնչակյան գլխավոր ցույցերը, Բեյրութ, 1954, էջ 117։

16 «Русская мысль», 1892, кн. 7, с. 51.

17 Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմություն, Նոր Նախիջևան, 1915, էջ 18—19։

18 А. И. Гиппиус, Статистические таблицы вилайетов турецкой империи, ближайший к Закавказью, Тифлис, 1889, с. 11—14.

19 «Մշակ», 1895, № 54։

20 «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, с. 329—332.

21 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ց. 1, դ. 132, թ. 15։

22 Նույն տեղում, դ. 146, թ. 1։

23 Նույն տեղում, դ. 151, թ. 2։

24 Նույն տեղում, դ. 139, թ. 14։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, թ. 11—12։

28 Նույն տեղում, դ. 157, թ. 1—16։

29 Նույն տեղում, դ. 153, թ. 1—6։

Բիթլիսում հոկտեմբերի 12-ին սկսված կոտորածը տարածվեց ամբողջ շրջակայքում, որի ընթացքում ավերակների վերածվեցին 38 հայկական գյուղեր, զոհվեց շուրջ 800—1000 հայ[30]։ Հաճնում, Մարաշում, Ուրֆայում հայերի կոտորածը սկսվեց 1895 թ. հոկտեմբերի առաջին օրերին։ Ուրֆայում հայերը դիմեցին ակտիվ ինքնապաշտպանության, բայց զենքի ու զինամթերքի անբավարարության հետևանքով երկար դիմադրել չկարողացան[31]։ Այնուհետև մասսայական ջարդեր տեղի ունեցան Սվազում, Ուռհայում, Դիարբեքիրում[32]։

Թուրքական կառավարությունը երկար ժամանակ նախապատրաստվում էր վճռական հարված հասցնել նաև Զեյթունի հայությանը, որը բազմիցս պայքարի էր ելել իր ազատագրության համար։ Անվերջ հարստահարությունները և կազմակերպված կոտորածները հայերին հարկադրեցին դիմելու ապստամբության[33]։ Ապստամբության նախապատրաստումը սկսվեց 1895 թ. հուլիսից, իսկ բուն գործողությունները ծավալվեցին նույն թվականի օգոստոսից և տևեցին մինչև 1896 թ. հունվարը[34]։ Մեծ գերակշռություն ունեցող թուրքական բանակներն անվերջ պարտություններ էին կրում։ Դեպքերին մշջամտեցին մեծ տերությունների հյուպատոսները և նրանց մասնակցությամբ թուրքական իշխանությունների ու ինքնապաշտպանության դիմած ապստամբների միջև տեղի ունեցան բանակցություններ։ Երկու կողմերի փոխադարձ զիջմամբ ի վերջո կնքվեց համաձայնագիր, որով թուրքական իշխանությունները պարտավորվում էին Զեյթուն ուղարկել քրիստոնյա կառավարիչ. տեղում պաշտոնյաներն ընտրվելու էին զեյթունցիներից, բնակչությունը հինգ տարով ազատվում էր հարկերից։

Հաղթական ապստամբության միջոցով զեյթունցիները միաժամանակ խույս տվեցին կոտորածից, սակայն սուլթանական կառավարության խարդավանքները շարունակվում էին։ 1896 թ. վաղ գարնանը «Համիդիե» գնդերն իրենց ավերիչ գործողությունները սկսեցին Վասպուրականում։ Վանում Ֆեիրիտ Սադետին փաշան տեղի հայության դեմ միասնական գործողությունների պլան էր նախապատրաստում։ Հայ ազգաբնակչությունը դիմեց ինքնապաշտպանության[35], սակայն ուժերն անհավասար էին։ Մարտերում զոհվեց 700 հայ։ Ավելի ողբերգական եղավ Վասպուրականի գյուղական բնակչության վիճակը։ «Համիդիե» գնդերը և մահմեդական խաժամուժը հայ բնակչությանը կոտորում էին վայրագ մոլեռանդությամբ[36]։

1896 թ. հունվար-օգոստոսին սուլթանական կառավարությունը եվրոպական տերությունների հետ դիվանագիտական խաղերի ընթացքում արևմտահայության դեմ կազմեց նոր, ընդարձակ գործողությունների պլան։ Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաշատ վիլայեթներում կրկին տեղի ունեցան մեծ ջարդեր։ Կ. Պոլսում կոտորածի ընթացքում թուրք դահիճները հատուկ սայլերով հավաքում էին դիակները, դրանք թաղում փոսերում կամ նետում Մարմարայի ալիքների մեջ։ Երեք օր տևած կոտորածներին զոհ գնաց 10000 մարդ[37]։ Սուլթանը այդ կոտորածով նպատակ ուներ «թուլացնել հայ ժողովրդի դերը Կ. Պոլսի տնտեսական և կուլտուրական կյանքում,— գրել է

---

30 Նույն տեղում, գ. 145, թ. 3—5։

31 Նույն տեղում, գ. 133, թ. 18։

32 «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, с. 101—102.

33 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ց. 1, գ. 73, թ. 43—44։

34 Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1968, Վ. Գ. Մելիքսեթյան, Զեյթունի հերոսական ապստամբությունը, Երևան, 1962, «Русская мысль», 1899, кн. 3, с. 26—36.

35 «Հուշեր Արմենակ Եկարյանի», Գահիրե, 1947։

36 Ա-դո, Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 18։

37 А. Тиркова, Старая Турция и младотурки, Пг.. 1916, с. 75.

Ե. Սարգսյանը,— զրկել հայ ազգաբնակչությանը նրա առաջավոր ու ղեկավար մասից»[38]։

Կ. Պոլսից հետո Արևմտյան Հայաստանի բոլոր վիլայեթներում հայերի ջարդերը կրկնվեցին[39]։ 1890-ական թվականների ջարդերը հայ ժողովրդից խլեցին 300.000—350.000 զոհ[40]։ Տասնյակ հազարավոր արևմտահայեր բռնագաղթեցվեցին և ցրիվ եկան աշխարհով մեկ, նրանցից շատերը ապաստան գտան ռուսական կայսրությունում։

Սուլթանական կառավարության կողմից հայերի զանգվածային կոտորածների սանձազերծման համար հաճախակի առիթ էին ընձեռում մեծ տերությունները, որոնք աշխատում էին Հայկական հարցն օգտագործել Թուրքիայում իրենց ազդեցության ամրապնդման համար։

XVIII և XIX հարյուրամյակներում Ռուսաստանի և Թուրքիայի միջև մղված պատերազմների ընթացքում օբյեկտիվորեն պայմաններ էին ստեղծվում Թուրքական դաժան լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդների ազատագրության համար[41]։ Այդ գիտակցությամբ էր թելադրված այն իրողությունը, որ Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդներն իրենց ազատագրության «մեսիան սպասում էին Պետերբուրգից»[42]։ XIX դ. 80—90-ական թվականներին ցարիզմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ, հետևաբար նաև Հայկական հարցում, տեղի ունեցավ փոփոխություն՝ կապված արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը Հեռավոր արևելք տեղափոխելու հետ, որտեղ իմպերիալիստական հզոր պետությունների միջև կատաղի պայքար էր ծավալվում Չինաստանի բաժանման համար։ Այդ վայրերում ավելի վճռական հանդես գալու նպատակով ցարիզմը ժամանակավորապես հրաժարվեց Թուրքիայի status quo-ի խախտման քաղաքականությունից, ավելի տանելի համարելով իր սահմանների հարևանությամբ ունենալ թույլ Թուրքիա, քան նրա տարածքի որոշակի մասը ստացած արևմտյան որևէ հզոր տերություն[43]։ Չնայած ցարիզմը չէր ցանկանում Հայկական հարցը դարձնել միջազգային քննարկման խնդիր[44] ու Մերձավոր արևելքում այդ կապակցությամբ լուրջ դժվարությունների տեղիք տալ, սակայն Արևմտյան Հայաստանի գրավման նպատակն օրակարգից չէր հանված[45]։ Վ. Ի. Լենինը ցարիզմի արտաքին քաղաքականության այդ կողմը նկատի ուներ, երբ նշում էր, որ «ցարիզմը կգերադասեր, իհարկե, սկզբում լիովին ջախջախել Գերմանիային, որպեսզի «վերցնի» հնարավորին չափ շատ՝ թե ամբողջ Գալիցիան, թե ամբողջ Լեհաստանը, թե ամբողջ Հայաստանը... Բայց ակներև է, որ ուժերը չեն պատում»[46]։ Այդ փուլում ցարիզմի գլխավոր խնդիրը սուլթանի վրա ազդեցության ամրապնդման միջոցով մյուս մեծ տերություններին Մերձավոր արևելքից դուրս մղելն էր[47]։ Այդ պատճառով էլ 1895 թ. ցարիզմը խուսափեց պաշտպանել Արևմտյան Հայաստանում նախաձեռնվող բարեփոխումների նախագիծը, որն առաջադրվել էր անգլիական կառավարության կողմից և հետևն գնացող նպատակներ էր հետապնդում։ Ցարիզմը ժամանակին կոահեց բուրժուական դիվանագիտության նենգա-

38 Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении, Ереван, 1972, с. 150.

39 АВПР, ф. «Политархив», д. 3460, лл. 32—35.

40 Նույն տեղում, էջ 31։

41 Ջ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, էջ 332—333։

42 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9. с. 9.

43 «Историк марксист», т. 20, М., 1930, с. 102.

44 АВПР, ф. «Политархив», д. 3435, лл. 51—52.

45 АВПР, ф. «Секретный архив министра», 14.1.13/25.8. 1897, л. 3.

46 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 233։

47 В. М. Хвостов, История международных отношений 1871—1917 гг., т. 1, М., 1947, с. 20.

միտ քայլի նպատակը, ըստ որի ռուսական սահմանի հարևանությամբ ստեղծված հայկական ինքնավար մարզը դրվելու էր արևմտյան պետությունների, առաջին հերթին Անգլիայի հովանավորության տակ և վերջինիս կողմից վերածվելու էր Ռուսաստանի դեմ պայքար ծավալելու մրցասպարեզի։ Այդ պատճառով էլ ցարական կառավարությունն իր դաշնակից Ֆրանսիայի հետ հակադրվեց Անգլիայի ծրագրին։

Սակայն Արևմտյան Հայաստանի հարցում ցարական կառավարության՝ XIX դ. 90-ական թվականներին բռնած դիրքի դեմ ծառացել էր Ռուսաստանի դեմոկրատական հասարակական միտքը։ Հայկական հարցի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքում առավել ցցուն դրսևորվեցին երկու ռուսաստաններ իրարամերժ դիրքորոշումները, ցարիզմի ռեակցիոն քաղաքականության դեմ ռուս դեմոկրատական հասարակայնության անհաշտ պայքարը և վերջինիս ջերմ ու հոգատար վերաբերմունքը, նյութական ու բարոյական ակտիվ օգնությունը սուլթանական քաղաքականության զոհը դարձած արևմտահայությանը[48]։ Ռուս հումանիստ գործիչներ Յու. Վեսելովսկին, Ա. Կոմարովսկին, Ա. Գրենը, Վ. Գոլմստրեմը, Ս. Սիրոմյատնիկովը, Կ. Նոտովիչը, Ա. Սաղոնովը, Ն. Գորենկոն իրենց ձայնը բարձրացրին, կոչ անելով օգնության ձեռք մեկնել արևմտահայությանը։ Նրանց ջանքերով հրատարակվեցին «Ցեղասպանական օգնություն Թուրքիայում տուժված հայերին» և «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թվականին տերությունների միջամտությունը» ժողովածուները, որոնք ռուս ընթերցողին իրազեկ էին դարձնում հայ ժողովրդի ողբերգությանը։ Լրագրող Ն. Գորենկոն հեռավոր Սիբիրից իր ձայնը հնչեցրեց հօգուտ արևմտահայության։ «Հաղարամյակների խորքից եկող հայ ժողովրդի օգնության կանչն է լսվում բիբլիական Արարատի բարձունքներից,— գրում էր նա։ —Մահմեդական ֆանատիզմը մոլեգնում է իր ողջ մոլուցքով։ Բարի և հզոր Ռուսիա, բարձրացրու քո արդար ձայնը և փրկիր քո հավատակիցներին»[49]։ Միևնույն ջերմությամբ և ակտիվ օգնության զգացումով էին տոգորված Կիևի համալսարանի ռուսաց պատմության ամբիոնի դոցենտ Ա. Գրենի՝ հայ ժողովրդի պատմությանը նվիրված գործերը[50]։ Հրապարակախոս Վ. Գոլմստրեմը «Ցեղայր հայեր» հոդվածում գրում էր. «Ռուս ընթերցող, քո ձայնն անհրաժեշտ է, քանի որ մեր բոլորի ձայնը միասին կազմում է հասարակական կարծիքը, Ռուսաստանի ձայնը, որը կեղծ չպետք է հնչի։ Քո համաձայնությունը անհրաժեշտ է ոչ միայն հայերին նյութական օգնություն ցույց տալու, այլև Ռուսաստանի հասարակական կարծիքը կեղծ ուղուց դեպի ճշմարիտը շեղելու համար»[51]։ Ռուսական առաջադեմ հասարակայնության ընդունումը պաշտոնական մամուլի մի շարք օրգանների («Ս. Պետերբուրգսկիյե վեդոմոստի», «Ռուսսկիյե վեդոմոստի», «Պրավիտելստվեննիյ վեստնիկ») ստիպեց իրենց տոնը մեղմացնելու հայ ժողովրդի նկատմամբ։

Մերձավոր արևելքում, ինչպես նաև Հայկական հարցում ցարիզմը և ֆրանսիական կառավարությունն ընթանում էին գիրկընդխառն[52], չնայած աշխարհամասի այդ հատվածում ռուս-ֆրանսիական ակնհայտ հակամարտություններին։ Եթե դեպի Բալկանների խորքը Ռուսաստանի առաջխաղացումն Ավստրո-Հունգարիային նետեց Գերմանիայի գիրկը, ապա Եվրոպայի կենտրոնում Գերմանիայի հզորացումը Ֆրանսիային մղեց Ռուսաստանի կողմը[53]։ Ղեկավարվելով իրենց իմպերիալիստական շահերով, ֆրանսիական կառավարող շրջանները հայկական մասսայական կոտորածների ժամանակ բռնեցին Թուրքիային

---

48 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1960, № 10, էջ 15—24։

49 «Сибирский вестник», 1897, № 17.

50 «Россия и Азия», 1898, № 15—16.

51 «Братская помощь пострадавшим в Турции армянам», с. 3—4.

52 "Die Grosse Politik Europaischen Kabinette" (այնուհետև՝ D. G. P. E. K.), Bd. IX, Berlin, 1924, № 2855.

53 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, с. 44.

հովանավորելու գիծ, որովհետև Թուրքիայի status quo-ի պահպանումը թույլ կտար նրա էկոնոմիկայում ապահովել ֆրանսիական կապիտալ ներդրումների անվտանգությունն ու եկամուտները[54]։ Ի հակադրություն պաշտոնական շրջանների՝ ֆրանսիական առաջադեմ մտածողները նույնպես իրենց ձայնը բարձրացրին հօգուտ արևմտահայության[55]։

1894—1897 թթ. մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում Անգլիան քաղաքական նկատառումներով Հայկական հարցում ավելի մեծ ակտիվություն ցուցաբերեց։ Ինչպես դարի 80-ական թվականներին, երբ Անգլիայի ազդեցությունը Թուրքիայում շատ մեծ էր, այնպես էլ 90-ական թվականներին բրիտանական կայսրության մերձավորարևելյան քաղաքականության բնագավառում Հայկական հարցն օգտագործվում էր որպես միջոց՝ սուլթանի վրա ճնշում գործադրելու և նրանից շահավետ զիջումներ կորզելու համար։ Անգլիան ամեն կերպ աշխատում էր սուլթանին վախեցնել հայկական ինքնավար մարզի ու հայկական բարենորոգումների ուրվականով։ Հարկավ, անգլիական կառավարող շրջաններին ամենևին չէր մտահոգում սուլթանական ջարդարարների զոհը դարձած արևմտահայության ողբերգական վիճակը։ Խորամանկ Ալբիոնը ձգտում էր այդ ճանապարհով վերականգնել ու ամրապնդել Թուրքիայում իր հրբեմնի ազդեցությունը։ Անգլիայի հանցապարտ մեղսակցությունը Հայկական հարցում հետագայում հարկադրված եղան խոստովանել անգամ անգլիական պետական գործիչները[56]։

Հայկական հարցը XIX դ. 90-ական թվականներին դարձավ նաև կայզերական Գերմանիայի դիվանագիտությանը զբաղեցնող խնդիրներից մեկը։ Գերմանիան ձգտում էր Թուրքիայում իր քաղաքական ու տնտեսական գերիշխանությունը հաստատելու համար խճճել մյուս տերությունների հարաբերությունները[57], նրանց հակադրել միմյանց և դուրս մղել Մերձավոր արևելքից։ Այդ նպատակով գերմանական դիվանագիտության կողմից կատարվում էր Թուրքիան Գերմանիայի և Ռուսաստանի միջև բաժանելու հրապուրիչ, սակայն խաբուսիկ առաջարկը, ինչպես նաև ակնարկն այն մասին, թե Անգլիայի դեմ Ռուսաստանի վճռական գործողությունների դեպքում Գերմանիան երաշխավորում է Ավստրո-Հունգարիայի չեզոքությունը[58]։ Թուրքիայում իր ազդեցությունը հաստատելու նպատակով 1894—1896 թթ. հայկական կոտորածների ամենաեռուն շրջանում Վիլհելմ II-ը ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Մերձավոր արևելք։ Նա հայտարարեց սուլթանին և նրա հպատակ մահմեդականներին իր պաշտպանության տակ վերցնելու մասին[59], դարձավ Աբդուլ Համիդի բարեկամը, Թուրքիայի խնամակալը[60]։ Եթե մեծ տերությունների համար սուլթանի վրա ազդեցություն ձեռք բերելը շատ կարևոր քաղաքական և դիվանագիտական հարց էր, ապա սուլթանին երբեք էլ չէր հետաքրքրում, թե նրանցից որն էր լինելու իր հովանավորը։ Նրան անհրաժեշտ էր նրանցից մեկի պաշտպանությունն ընդդեմ մյուսների, մի նեցուկ, որը հեշտացներ քրիստոնյաների և մանավանդ հայության դեմ ոճիրներ գործելը։

Հայկական մասսայական կոտորածների ընթացքում Գերմանիան ձեռնպահ մնաց ու հրաժարվեց մասնակցել ինչպես Սասունում հետաքննական հանձնաժողովի, այնպես էլ հայկական ռեֆորմների նախագծերը կազմելու աշխատանքներին։ Վիլհելմ II-ը նամակով արյունարբու սուլթանին խրախուսում

---

54 Е. К. Саркисян, նշվ. աշխ., էջ 186—192։

55 «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», ժնև, 1907։

56 Герцог. Аргайлский, Ответственность Англии в Восточном вопросе, СПб., 1909, с. 173; Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390.

57 Мелик Каракозов, Выступление Германии в Турции после великих армянских погромов, Тифлис, 1915, с. 13.

58 «Красный архив», т. IV, М., 1931, с. 87.

59 Г. Халгартен, Империализм до 1914 г., М., 1961, с. 230.

60 А. Норден. Уроки германского империализма, М., 1948, с. 13.

էր աներկյուղ գործել, ցույց տալ, որ «ինքը հանդիսանում է Ալլահի ստվերը երկրի վրա»[61]։ Գերմանական դիվանագետները շտապում էին սուլթանին խորհուրդ տալ անպատիժ հաշվեհարդար տեսնել հայերի նկատմամբ[62]։ Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Ռընե Բինոնը գրում էր. «Հայկական կոտորածների ընթացքում, եթե գործադրությունը թուրքական է, մեթոդը գերմանական ցույց տրված է»[63]։ Գերմանիան Թուրքիայում պայքար մղելով ընդդեմ ռուսական ազդեցության, պայքարի սլաքը առաջին հերթին ուղղում էր արևմտահայության դեմ՝ գտնելով, որ հայերով բնակեցված Հայաստանը խիստ վստանգավոր էր Գերմանիային[64]։ «Գերմանիան Հայաստանում հայերի բնաջնջման մեջ քաղաքական շահ ուներ»[65],— իրավացիորեն ընդգծում էր Ռ. Բինոնը։ Գերմանիայի կառավարող շրջաններն անմարդկային դաժանությամբ դիտում էին հայկական կոտորածները և, չնայած մինչև 1896 թ. ամռան կոտորածները թուրքական կառավարության մտադրությունները հայտնի էին գերմանական դիվանագիտությանը[66], գերմանական կառավարությունը ոչ մի միջոց չձեռնարկեց ահավոր կոտորածները կանխելու համար։ Ավելին, Կ. Պոլսում գերմանական դեսպան ֆոն Զաուրման սուլթանին առաջարկում էր իր տերության հովանավորությունը՝ հայերի բնաջնջումը համարելով նրա իրավունքը[67]։ Այսպիսով, Գերմանիան հանուն իր իմպերիալիստական շահերի Մերձավոր արևելքում ատոիճանաբար դառնում էր Աբդուլ Համիդի ջարդարարական քաղաքականության նեցուկը։ Նրա թողտվությունը սուլթանին ավելի վրստահ ու վճռական էր դարձնում արևմտահայության դեմ արյունալի գործողություններ ծավալելիս։

Վիլհելմ II-ի հակահայկական քաղաքականությունը բազմիցս քննադատվել է գերմանական ազատամիտ մտավորականության կողմից։ Առաջադեմ գործիչ Գ. Բրանդեսը, օրինակ, իր բազմաթիվ հրապարակային ելույթներում բացահայտում էր Արևմտյան Հայաստանում տիրող ունեցող ջարդերի ծանր հետևանքները, թուրքական ֆանատիկ ամբոխի ու չինովնիկների անմարդկային, բիրտ գործողությունները։ Նա անխնա քննադատության էր ենթարկում Վիլհելմ II-ին, որի հովանավորությամբ սուլթանն իրագործում էր տասնյակ ու տասնյակ հազարավոր հայերի կոտորածը։ «Գերմանիայի բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ,— գրում էր Գ. Բրանդեսը,— վերջինիս տվեց ազատ օդ շնչելու հնարավորություն...։ Այժմ ավելի շատ, քան առաջ, սկսեց արյուն հոսեցնել, բռնությամբ ու արյունով ստիպեց հայերին լռել»[68]։

Ավստրո-Հունգարիան, պայքարելով բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ, թշնամանքով էր վերաբերվում նաև արևմտահայության ազատագրական շարժումների նկատմամբ, վախենալով, որ հայկական հուդումները իրենց արձագանքը կգտնեն սլավոնական ժողովուրդների միջավայրում, որոնք նույնպես ազատագրական պայքարում կողմնորոշվում էին դեպի Ռուսաստանը[69]։ 1894—1896 թթ. հայկական կոտորածների ընթացքում Ավստրո-Հունգարիան վախենում էր անգլո-ռուսական մերձեցումից և նեղուցները Ռուսաստանի ձեռքն անցնելու հեռանկարից։ Նկատելով դրանից, Ավստրո-Հունգարիան նույնիսկ պատրաստ էր Արևմտյան Հայաստանում

---

61 Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 107։

62 D. G. P. E. K., Bd. XII, № 3092.

63 Ռընե Բինոն, Հայերու բնաջնջումը, Կ. Պոլիս, 1919, էջ 5։

64 «Международные отношения в эпоху империализма», серия III. т. I, М., 1931, с. 175.

65 Ռընե Բինոն, նշվ. աշխ., էջ 6։

66 D. G. P. E. K., Bd. XII, № 2832.

67 Նույն տեղում, № 2891։

68 Г. Брандес, Армянский вопрос, Астрахань, 1906, с. 23.

69 D. G. P. E. K., Bd. X, № 10.

ռեֆորմների հարցի շուրջը համաձայնության գալու Անգլիայի հետ ընդդեմ Ռուսաստանի[70]։ Ինչպես մյուս տերությունների, այնպես էլ Ավստրո-Հունգարիայի համար Հայկական հարցում ելակետն իմպերիալիստական ձգտումն էր՝ միայն թե չվնասվեն իր իմպերիալիստական շահերը. «Եթե հայերին վիճակված է մեռնել,— ցինիկորեն հայտարարում էր Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Ա. Գոլուխովսկին,— նրանք պետք է մեռնեն»[71]։ Ավստրո-Հունգարիան Հայկական հարցում համերաշխ գործելով Անգլիայի հետ, պատրաստակամությամբ պաշտպանեց նաև սուլթանի վրա ճնշում գործադրելու նպատակով Թուրքական ջրերը տերությունների ռազմական նավատորմ մտցնելու անգլիական կառավարության առաջարկը[72]։ Իրավացի է Ա. Կուրդինյանը, գրելով, որ Ավստրո-Հունգարիայի այդ գործելակերպի շարժառիթը բոլոր դեպքերում ոչ թե Թուրքական բաշիբոզուկների զոհը դարձած Արևմտյան Հայաստանի աշխատավորության փրկության, այլ Անգլիայի հետ ընդդեմ Ռուսաստանի ընդհանուր տակտիկայի մշակման ձգտումն էր[73]։

Եվրոպական մեծ տերություններն արևմտահայության ազատագրական ձգտումները հիմնականում օգտագործում էին միմյանց դեմ մղվող պայքարում։ Վ. Ի. Լենինը բացահայտել է իմպերիալիստական տերությունների քաղաքականության այդ կողմը։ «Իմպերիալիստական տերություններից մեկի դեմ մղված ազգային-ազատագրական պայքարը,— գրել է նա,— հայտնի պայմաններում կարող է օգտագործվել մեկ այլ, «մեծ» տերության կողմից նույն իմպերիալիստական նպատակներով»[74]։ Երբեմն հասարակական կարծիքի ճնշման տակ, առաջին հերթին նկատի ունենալով իրենց շահերը, տերությունները ռեֆորմների ծրագրեր էին մշակում ու ներկայացնում Թուրքական կառավարությանը, որից հետո բարեհոգությամբ դիտում էին, թե Բ. Դուռն ինչպես է կոտորում իր քրիստոնյա հպատակներին։ «Եվրոպական դիվանագիտությունը Թուրքիայից բարենորոգումներ էր պահանջում,— գրել է Ջ. Կիրակոսյանը,— այդ բարենորոգումները խանգարելու համար»[75]։ Քննարկելով Մերձավոր արևելքում մեծ տերությունների հետապնդած շահերի ու դրանից բխող հակամարտությունների խնդիրը, արևմտահայության մեծ ողբերգությանը նրանց հանցակից լինելը, Մ. Խվոստովը գրել է. «Բեռլինի կոնգրեսը հայ ժողովրդի զգալի մասը թողեց Թուրքերի լծի տակ։ Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ Թուրքահայերի համար. այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման»[76]։ «Արևմտյան Հայաստանը արևմտյան մեծ տերությունների «տղորմությամբ» Թուրքական տիրապետության տակ թողնելը և իրենց գաղութատիրական շահերի նպատակին «հայկական հարցը» առուծախի առարկա դարձնելը,— գրել է Ջ. Գրիգորյանը,— դարձավ արևմտահայության բնաջնջման, հրաշքով կենդանի մնացած բեկորների բռնագաղթերի ու աշխարհասփյուռ թշվառ պանդխտության, մեծ ողբերգության գլխավոր պատճառներից մեկը»[77]։

---

70 Նույն տեղում, № 2568։

71 А. Е. Курганян, Армянская проблема в международных отношениях (автореферат докт. диссертации), М., 1969, с. 26.

72 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1983, № 1, էջ 30։

73 А. Е. Курганян, Европейская дипломатия и армянский вопрос в 90-х годах XIX в. («Ученые записки Московского областного пед. института им. Н. К. Крупской», т. 191, вып. 9, М., 1968, с. 223).

74 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 27, էջ 313։

75 Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 17։

76 «История дипломатии», т. 2, М., 1963, с. 333.

77 Ջ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, էջ 305—306։

Այսպիսով, 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո սուլթանական կառավարությունը իմպերիալիստական խոշոր տերությունների թողտվությամբ ծրագրեց և գործնականորեն իրագործեց արևմտահայության կոտորածը։ Մերձավոր արևելքում մեծ տերությունների զավթողական շահերը և Հայկական հարցում նրանց դիվանագիտական շահատակությունները ազատ արձակեցին սուլթան Աբդուլ Համիդ II-ի ձեռքերը՝ 1893—1896 թթ. ընթացքում կոտորելու 300.000—350.000 անմեղ հայերի, արևմտահայության դեմ նյութելու դաժան ոճիրներ։

ПОЛИТИКА СУЛТАНСКОЙ ТУРЦИИ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ И ВЕЛИКИЕ ДЕРЖАВЫ

(90-ые годы XIX в.)

ПОГОС СИМОНЯН

Резюме

После Берлинского конгресса 1878 г. султанское правительство при попустительстве великих держав запланировало и на деле осуществило резню западных армян. Захватнические интересы великих держав на Ближнем Востоке и их дипломатические ухищрения в Армянском вопросе развязали руки султану Абдулу-Гамиду II, в 1893—1896 гг., организовавшему резню западных армян, жертвой которой стали 300—350 тыс. мирных жителей.